



ՄԱՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են

իրաւաբանիւր բառին 2 կոպեկ.

Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ՀԱՄԱՐԱՆՈՒՄ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՐՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ռուսաստան և Անգլիա. Հեռագրեր. — ՆՆԻ-
ֆիւն ՏԵՍՈՒԹԻՒՆ. Փաստեր և եղբայրացութիւն.
Նամակ երեսնից. Նամակ Ներքին-Արտաքին.
Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վեր-
ջին տեղեկութիւններ. Հանձնարար. ծառ. Նա-
մակ Ամերիկայից. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ
ԼՈՒԹԵՐ. — ՀՆՈՒԱԳԻՒՆԵՐ. — ԲՈՐՍՍ. — ՅԱՅՏԱՐՍ-
ԲՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մանուկներ և
ծաղիկներ.

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԵՒ ԱՆԳԼԻԱ

Քաղաքական շրջաններում, լրագրական
և ամսագրական յօդուածներում շատ են
խօսում Ռուսաստանի և Անգլիայի մերձեց-
ման մասին և շատ յոյսեր են տածում ու
զրախան հետևանքներն ապագայում այդ մեր-
ձեցումից: Այդ երկու պետութիւնների
միասնացումը համարվում է զրաւական
մի շարք քաղաքական խնդիրներ լուծելու
համար:

Պէտք է նկատել, որ ներկայ տասնին-
ներորդ դարի ընթացքում Ռուսաստանը և
Անգլիան մշտական մի խուլ մաքառման և
մրցման մէջ են եղել միմեանց դէմ և մի-
քանի անգամ նոյն իսկ ընդհարումներ են
ունեցել: Անգլիայի քաղաքականութեան մի
մասը նուիրված է եղել այն բանին, որ
կրճատի Ռուսաստանի աճող ոյժը և զօր
նրա առաջընթաց շարժումը դէպի Ասիայի
խորքերը: Անգլիական հին քաղաքականու-
թեան տեսակետով Ռուսաստանին դիմա-
դրելը համարվել է իբրև մեծ հայրենասիր-
ութիւն: Այդ տեսակետով անգլիացիները
արդարացի են իրանց հայրենիքի եռան-
դուն մասնակցութիւնը կրիմի պատերազ-
մում: Այդ տեսակետով նրանք ողջունել են
Սան-Ստեփանոսի դաշնագրի ուղիղակի
լինելը դաշնագրի խմբագրութիւնը, կիսադա-
շնագրի կապերն և այլ գործողութիւն-
ներ, որոնցով վնասվել են Ռուսաստանի
շահերը կամ միջազգային հեղինակութիւնը:

Սակայն Անգլիայում վաղուց են լսվում
բազմաթիւ ձայներ, որոնք չեն ընդունում
Ռուսաստանի հետ թշնամի լինելու հա-
յեացքը և պնդում են, որ պէտք է հիմնու-
վին փոխ յարաբերութիւնները, և թշնա-
մութիւնը փոխարինել համարաշխութեան:
Այն ժամանակ, ապացուցանում են նրանք,
այդ երկու ահագին պետութիւնները,

պայմանաւորվելով իրանց ազդեցութեան
շրջանների վերաբերմամբ, կարող են մի-
մեանց օգնել լիակատար կերպով առաջ
տանելու քաղաքական գործը Ասիա-
յում:

Ներկայումս Անգլիայում այդ հայեացքի
ամենախոշոր ներկայացուցիչն է «Review
of Reviews» ամսագրի խմբագիր Ստէք, որ
ծանոթ է Ռուսաստանի կեանքին, զրաւա-
նութեան և կենցաղավարական հանգա-
մանքներին: Ռուսաստանում մի քանի տա-
րի սրանից առաջ նոյն ուղղութեամբ խօ-
սեց յայտնի պրոֆէսոր Մարտէնս և դուռ
համակրական արձագանք թեմպայի ափե-
րում: Անգլիան և Ռուսաստանը այժմ այն-
քան մոտեցել են միմեանց Ասիայում, որ
շուտով պէտք է նրանք վերջնականապէս
որոշեն միմեանց բաժանող սահմանագծե-
րը: Արդէն այդպիսի մի փորձ տեղի է ու-
նեցել Աֆգանիստանի և Պամիրի շրջաննե-
րում, նոյնը պէտք է տեղի ունենայ և
միւս շրջաններում:

Եթէ, սակայն, են նոր հայեացքի պաշտ-
պանները, չը լինել խիստ հակառակու-
թիւն Անգլիայի և Ռուսաստանի մէջ, դեռ
քան տարի առաջ Անգլիան չէր ջնջի
Սան-Ստեփանոսի դաշնագրից այն յօդուած-
ները, որոնցով իրապէս ապագովում էր
քրիստոնեաների կեանքը և առաջադիմու-
թիւնը, բարգաւաճած կը լինէին ամբողջ
նահանգներ, որոնք քան տարվայ միջո-
ցում դատապարտված են ամենաթշուա-
կանքի և ներկայումս տեղի չէին ունենայ
այնպիսի ապրապիւն տեսարաններ, որոնց
նմանը չէ յիշում պատմութիւնը: Ստէք
իր համախոհները կարծում են, որ ան-
կեղծ և մարդասեր վերաբերմունքով դէպի
միջազգային խնդիրները կարելի է գտնել
միութեան յարմար ձև, և միասին առաջ
գնալ, բարեկեցութիւն ընծայելով այն բո-
լոր ազգերին, որոնք այժմ տանջվում են
շնորհիւ այն բանի, որ միմեանց բաժան-
ված և միմեանց հետ թշնամացած մեծ
պետութիւնները մասնակ են նրանց անդր-
ժուլեան և լուծութեան:

Հ Ն Ո Ւ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

(Ռուսաց զորքավարութեան)

Պարիզ, 27 հոկտեմբերի: Կամբոնի տեսալ-
ցութեան պատճառով սուլթանի հետ, Մոսկո-
յում:

տասարդ գիւղացիների գերանդները ձեռքի
կռիւ էին մղում հաղած արտերի հետ: Նրանք
յոգնած էին: Երեսները քրտնեղով չաղալված
ու դուրսները գոճաւոր թաղիմախներով փա-
թաթած՝ անհամեստ արկածներ էին պատմում
ու սրտանց ծիծաղում: Հօրիզոնը լայն էր և ըն-
դարձակ: Հեռավորութեան մէջ դաշտի վրայից
գոյրչիները շարժվել էին իրանց տեղից և դե-
պի երկնքէն դիմում: Երկրի գոճաւոր կապու-
տակի վրա հաղիւ նշարվում էին ձիւնապատ
գաղաթներով լեռների շերտեր, որոնց ստոր-
տեղ դուրս գալով մի գետակ, տարածվում էր
ամբողջ դաշտի վրա և մի երկու տեղ պտոյտ
գործելուց յետոյ անհետանում էր խիտ անտա-
ռի մէջ: Ահա գեղեցկութիւն, ահա ներդաշնա-
կութիւն, արտասանեցի եւ: Ոչ, բողբոջ սըր-
տիս խորքից ներքին ձայնը, և ես չարունակեցի
ձանաղաւս:

Անտառի խորքում, մի կանաչադաղձ հրապա-
րակի վրա բարձրանում էր հինաւոր ընկուղե-
նի: Երկնքը ամպամած էր: Հեռավորութեան
մէջ լայն չերտերով անձրիս խոշոր կաթիլներ
էին թափվում, իսկ հակառակ կողմը, սպիտակա-
գոյն հոսք ամպերի միջից, մայր մանող արեւ
արձակել էր ոսկեփայլ ճառագայթները: Երկնա-
կամարի վրա կիսաշրջան էր կաղմել ծիածան,

բէյ հաղորդեց Հանձնարար, թէ սուլթանը հրա-
մայեց ազատել անմեղ բանտարկեալներին, դա-
դարեցնել հայերի հալածանքը, ժողով դուռնաբել
պատրիարքի ընտրութեան համար և վերանորո-
գել աւերված վանքերը: Նաղիւր-բէյ, Սարգստօրին
սպանողը, դատի ենթարկվեց: Դիարբէքի վաղի
Անիս-փաշա և Կ. Պօլսի ստաիկանութեան պրե-
ֆէկտ Նաղիւր-բէյ արձակված են պաշտօնից.
1895 թւին հայ վիլայէտներին տրված ընթեր-
նները կը գործադրվեն ուրիշ նախադրեալով: Հա-
նձնարար, որ Կամբոն կը հակի այդ խոտ-
մունքների իրագործման վրա:

Կ. Պօլսի, 27 հոկտեմբերի: Լուր է պտտում,
որ սուլթանի այժմեան առաջին թարգման Կա-
րաթմէօօրի-փաշան արտաքին գործերի մինիստր
կը նշանակվի:

Սօֆիա, 27 հոկտեմբերի: Պորթլէս լրագի-
րը հաղորդում է, որ մինիստրների խորհրդում
վճռվեց իրաւունք տալ մտաւորապէս 1000 հայ
գիւղացիներին, որոնք Անատոլիայի և Կ. Պօլսից
փախած են վարձա, բնակութիւն հաստատել:
Նրանց հողաբաժիններ կը տրվեն Գօբուլայում,
որ հողը յարմար է մշակութեան համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓԱՍՏԵՐ ԵՒ ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ա. Սաղմոսով, իր ուսումնասիրութեան շարու-
նակութեան և վերջաբանի մէջ, որ տպված է
«Русская Мысль» ամսագրի հոկտեմբերի համա-
րում, նորից բերելով թանգաների մի երկար
շարք, որոնք ամենապարզ կերպով ապացուցա-
նում են հայերի վրա բարդած մեղադրանքների
կատարեալ ստույգութիւնը, հետեւալ կերպով է
վերջացնում իր յօդուածը.

Իբրև վերջաբան, համառօտ կերպով կրկնեմ
այն եղբայրացութիւնները, որոնք մենք հասանք:
Հայերը բոլոր ուրիշ ազգերից ամենից շատ
առաւելապէս, իրաւունք ունեն կոչվելու գիւ-
ղական հողագործ ժողովուրդ, որովհետեւ գիւ-
ղացիները նրանց մէջ կազմում են 95% և նը-
րանց գլխաւոր պարագամունքը—հողագործութիւնն
է. քաղաքի մէջ ապրողների մեծամասնութիւնը
պարագաւոր է արհեստներով և մշակութեամբ, իսկ
միայն փոքրամասնութիւնը (մօտ տասը, տասներ-
կու հազար) պարագաւոր է մանրավաճառութեամբ
և միայն շատ քիչերը, որոնց թիւը կարող է

որի գոյների քննութիւնը եղակի է աշխարհիս
ստեղծագործութիւնների մէջ: Ընկուղեներն մերթ
լուսաւորվում էր թաքմ կանաչ գոյներով, մերթ
ծածկվում էր ստուերի մէջ: Ընկուղեներն առկ
հովանաւորվել էին մի բազմադարեան մատուռի
աւերակներն, որոնց ձեղքերից դուրս էին սրծել
անթիւ թփեր տարբեր գոյների և մեծութեանով
Աւերակների կողքին նշարվում էին վաղուց
ցամաքած փղերի աղբիւրի հետքերը: Այնտեղ,
քարերի կոյտերի վրա, ընկած էր երկնքեանդ
փղերի թռչունի դիակը, որին մերթ-մերթ մօ-
տենում էին նոյն ցեղին պատկանող թռչնիկ-
ներ, զոյգ-զոյգ, կամ աւելի մեծ թռչուն, պարե-
ւում էին դիակի շուրջը, ծվւում էին և կտուց-
ները մօտեցնում էին իրար, կարծես ցաւակցու-
թիւն էին յայտնում միմեանց և իսկայն թռչում
անհետանում էին:

Ահա ներդաշնակութիւն, չնչնեցի եւս: Ընչ,
ստացայ մի և նոյն պատասխանը և հեռացայ:

Գիշեր էր: Մութ-կապույտ երկնակամարի վրա,
քնքեյ ամպերի հետ պար էր բռնել լրացած լու-
սինը: Նա երբեմն մօտենում էր նրանց, լուսա-
ւորում էր մի րոպէ, յետոյ ծածկվում էր նրանց
քամակին և ստուեր արժուած երկրի վրա: Երբեմն
ջրում էր իր մառից ամպերի բազմաձև կտոր-
ները և իր չուրջը մեծ հրապարակ բացում, փայ-

հարկներով հաշու, պարագաւոր են խոշոր
առեւտրական, ֆաբրիկային և գործարանական
արդիւնաբերութեամբ: Չը կայ, սակայն, կով-
կասում առեւտրի մի այնպիսի ճիւղ, որի մէջ
հայերը տիրապետող հանդիսանային: Հայերը
դէպի կրթութիւնը և պետական լեզուն սովորե-
լու իրանց ձգտման մէջ առաջին տեղերից մէկն
են բռնում կովկասի բոլոր միւս ազգութիւնների
չաբքում: Պատմական պայմանների պատճառով
հայերը հեշտութեամբ ապրում են բոլոր ուրիշ
ազգութիւնների հետ (այդպէս, մեր ուսումնասի-
րած նախնիների մէջ չը կայ գրեթէ մի գիւղ,
որի մէջ նրանց հետ չապրէին վրացիներ, թուր-
քեր և այլն):

Ընչ վերաբերում է հայերի դէպի Ռուսաս-
տանն ունեցած յարաբերութեան, ոչ մի հիմը
չը կայ կասկածելու, թէ հայերը լցված չեն ան-
կեղծ երախտագիտութեան զգացմունքով դէպի
իրանց նոր հայրենիքը:

Կարելի ընթացքում մի քանի արեւելեան ազ-
գերի տիրապետութիւնից անցնելով ուրիշների
իշխանութեան տակ, նրանք միայն Ռուսաստա-
նի հետ միասնացել յետոյ կազմեցին քրիստո-
նեայ պետութեան մի մասը, և միայն այդ ժա-
մանակ ազատ չունէ քաղցին և հաւատարմ
ուղեներն տէր քաղաքացիներ զգացին իրանց:
Եթէ մէկը հարցնի ինձ, թէ ապա ինչպէս է
պատահել, որ ուսու գրականութեան մէջ կարո-
ղացել է ստեղծվել հայի ախպը բոլորովին հա-
կառակ այժմ նկարագրված տիպին, դրան ես կը
պատասխանեմ, թէ ճիշդ այդպէս, մեր բարեկամ
Փրանսիացիների մէջ ստեղծվել է ուսու ախպը,
որը մինչև այսօր էլ չէ փոխվում նրանց դրա-
կան արտադրութիւնների մէջ և որը այդպէս
աջող կերպով դուրս է բերված յայտնի Caran-
dach-ի ձեռքով նրա «A la decouverte de la
Russie» ալբոմի մէջ:

Այնտեղ, ուր երկրի մասաւոր կեանքը համա-
խմբվում է մի կենտրոնում, ուր գաւառական
մամուլը հանդիսանում է մարաքաղաքի մա-
մուլի վատ պատճէնը, այնտեղ գաւառային ա-
ռանձնապաւովութիւնների մասին անհետանում է
որ և է դադարաւոր, այնտեղ տեղական ուսում-
նասիրութիւնները պատաւոր տեղ չեն բռնում
և ահա ինչի համար մինչև այժմ կովկասեան
վիճակագրական կոմիտէի նշանաւոր բաղմահա-
տոր ուսումնական աշխատութիւնները ծանօթ
են շատ քիչ մասնագէտների և, դուրս, դեռ եր-

լուն չողեր արձակելով երկրի վրա: Երբեմն ըզ-
գուշութեամբ սխառում էր միակ, սեւագոյն ամպը
մեծ կուտակի կողմը, փաթթվում, թաղվում
նրա թանձր փնչերի մէջ և մի անթարթում
այս ու այն կողմ չամանաղաւ տարածում: Բնու-
թեան մէջ խաղաղութիւն էր տիրում: Այդ մի-
ջոցին, մի ժայռի ստորոտին, ուր հոնի թփեր
էին շարվել, կանաչադաղձ մակերևոյթի վրա
խաբոյլ էր վազվում: Նրա շուրջը նստած էին
մի քանի հողի չինականներ, որոնց մէջ կային և
ծծի երեխայ, և դառաւաղ ծերունի: Նրանք
ուխտաւորներ էին, որ ամբողջ օր ձանաղա-
հօրքելուց յետոյ ինչ էին հանդիսաւ առնելու հա-
մար: Սալը կանգնած էր մի փոքր հեռու, իսկ
կենները բարձրաձայն չունէ քաղցով պոկում
ծամում էին թփի տերևներ: Սալի կողքին մի
մանկահասակ կին օրօրաց էր օրօրում և անհա-
մարձակ ձայնով նստելի ասում: Խորոյթի մօտ
նստած էր մի երիտասարդ տղամարդ և հոնի ճիւ-
ղերի չամիւրները պատրաստում խորովածի հա-
մար: Երբեմն պատմում էր մի ինչ որ արկած
իր վաղեմի կեանքից, իսկ իր վեց տարեկան
թուր, մոլորեա երեսին ուշադրութեամբ լսում էր:
Կրակը աստիճանաբար բացվում էր և իր
չուրջը կարմրադոյն լոյս տարածում: Ծովը
բարձրանում էր դէպի երկնք և փոքր առ փոքր
նստարանով հալվում, ձուլվում էր գիշերային

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐ ԵՒ ԾԱՂԻԿՆԵՐ

Ինչպէս գտնել ընտելեան մէջ գեղեցկու-
թեան և ներդաշնակութեան կատարելագոյնը,
ահա մի հարց, որ երկար ժամանակ տանջում
էր իմ միտքը: Թափառում էի սարեր ու ձորեր,
դաշտեր ու անտառներ և ամեն տեղ բացվում
էին աչքին առաջ միմանցից գերազանց պեմ-
նեւ պատկերներ: Նրանք գրաւում էին ինձ,
բայց գեղեցկութեան այն վսեմագոյնը, որ անտ-
րոյ կերպով պատմում էր երեսակայութեան մէջ
չէի գտնում ընտելեան մէջ:

Մի խաղաղ առաւօտ, երբ արեւը հօրիզոնից
նոր էր բարձրացել ու ժպտաւ տարածել երկրի
երեսին, մի խորհրդաւոր անկեանում, փոքրիկ
ու յստակ աղբիւրից ոչ հեռու, մատաղահաս
կաղնիս իր մոյգ-կանաչագոյն տերևները տաքաց-
նում էր արեւի ճառագայթներով: Իր երկար
ստուերի տակ հիւրասիրել էր մի գիւղացի աղե-
ւորին: Ծերունին, ծխաբարձր բերանին մօլորա-
դոյն ծուխ էր դուրս փչում թանձր բեղերի
միջից: Մի քանի քայլ հեռու չորս հողի երե-

Գ. Բա՛խն զաղեան

Լուրձա Նիկիտա տալու է նոյեմբերի 10 ին մի կօնցէրտ Բազուի հայոց Մարդասիրական ընկե-
րութեան օգտին:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեղ հաղորդում են. «Վա-
նից եկած 500 դաղձականները, որոնք համա-
րեա բոլորն էլ վաճառականներն և արհեստաւոր-
ներ են, գնացել են Երևան, Թիֆլիս, Բաքու և
Բաթում, իսկ մնացած 770 անձինքը, մեծ մասը
կանայք և երեխաներ, Վհատիսի կարգադրու-
թեամբ, ցրվել են գանազան գիւղերը:

ՆՈՒԽՈՒՑ մեղ գրում են. «Լսում ենք, որ
տեղիս նորընտիր ըստաւային վարչութիւնը
որոշել է բաղադրի փողոցները կանոնաւոր խնու-
ղիւնների վերածել, լուսաւորութիւնը լուսացնել և
քաղաքը ներմուծող նիւթերից մի որոշ տուրք
պահանջել քաղաքի օգտին: Բացի այդ, ա-
ւելորդ չի լինի յիշեցնել վարչութեան և հե-
տեւեալ ոչ պակաս կարեւոր հարցերը. 1) ան-
հրաժեշտ է հիմնաւոր միջոցներ ձեռք առնել
քաղաքում մարտիկան պահպանելու համար, ո-
րից նա բոլորովին զուրկ է. 2) որ ամենազլխա-
ւորն է, հողաւ մի օրինաւոր բաղանիքի մասին,
ի՞նչ քաղաքում կան մի քանի հին բաղանիքներ,
բայց զրանք զուրկ լինելով ամենաաւարական
առողջական պայմաններից՝ մարտիկանից, տա-
քութիւնից և աւազաններից, երեսուն հազարից
աւելի բնակիչ ունեցող քաղաքին անկարող են
բաւականութիւն տալ. 3) զլխաւոր փողոցների
կենտրոններում չինել տալ մէկ կամ երկու հա-
տարակց արտաքինների, որոնց բացակայու-
թեան պատճառով, փողոցները օրը ցերեկով
տգեղ տեսարաններ են ներկայացնում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պօլսից լրագրիւններն հաղորդում են. «Սու-
լթանը լսել անգամ չէ ուզում որ և է զիջում-
ներն մասին, թէպէտ և կարծում են, որ վերջի
վերջոյ նա ստիպված կը լինի զիջել: Եւրօ-
փոստում մի քանիսն արդէն կարծիքի են, թէ
սուլթանը պարտաւոր է կամ մերժել որ և է
բեֆօրմներ, որպէս անօգուտ, կամ ընդարձակ
միջոցներ ձեռք առնել այն մտքով, ինչպէս այդ
մտադրութիւն ունէր անել Միջհատ-փաշան,
այսինքն պարլամենտական վարչութեան եղա-
նակ մտցնել Թիւրքիայում: Ասում են, որ յաղ-
թութիւնը երկի երկրորդ կուսակցութիւնը կը
տանին: Այժմեան միտնարութիւնը գոյութիւն
կունենայ մինչև այն ժամանակ, քանի որ սու-
լթանը չի կատարի եւրօպական պետութիւնների
պահանջը: Այն դէպքում, եթէ սուլթանը կը
փոխի իր հայեացքները, պատճառի կը կանչվի
կրկին նախկին մեծ վիզիր Բիւլուլ Սաիդ»:

Կ. Պօլսից հաղորդում են հոկտեմբերի 18-ից
(ն. տ.), որ սուլթանը իշխող-Քիօսկ կանչեց
նախկին մեծ վիզիր Բիւլուլ Սաիդ փաշային և
երկար նրա հետ խօսակցեց: Այդ պատճառով
լուրեր սկսեցին պոստել, թէ վերջինս կը նշա-
նակվի արտաքին գործերի մինիստր Տէվֆիկ-փա-
շայի տեղը:

Ծագումով քիւրդ համայնքը աշխատում էին
փողոցային խառնակութիւններ առաջ բերել:
Նրանք կողպեցնեցին երեք խանութներ Գում-
Պալու հայ թաղում և աշխատում էին մտնել
Պէրա, ուր չը թողեց նրանց ոստիկանութեան
օգնութիւն հասած մի զօրեղ զորաբաժին: Այ-
նու ամենայնիւ, այդ առիթով քաղաքում սար-
սափ տարածվեց: Բոլոր մազապիւնները և խա-
նութիւններ փակեցին, իսկ քրիստոնեաները փակ-
վեցին իրանց տներին մէջ: Գրութիւնը քաղա-
քում վերին աստիճանի երկրաշարժի և անյուստի-
է, և որպէս քրիստոնեաները, նոյնպէս և մահ-
մետականները ինչ որ արտակարգ մեղքերի են
սպասում: Հայոց պատրիարքի տեղապահ Բար-
դուլիմէնս երկրորդ անգամ ինչորեց սուլթանից
արձակել իրան իր պատճառից, բայց մերժում
ստացաւ: Ամսի 27-ի գիշերը Կ. Պօլսից
ծովը մտաւ թիւրքաց «Խոտամբուլ» չորեքուսը,
որ տանում է 300 ձերբակալակ հայեր: Այդ
անտապակի ճանապարհորդութեան նպատակը
անյայտ է, և այդ պատճառով մեծ յուզումն է
առաջացրել քրիստոնեայ ազգաբնակչութեան մէջ:

Կ. Պօլսից «Одесский Листок» լրագրին գը-
րում են. «Հայ-հնչակեանների մէջ մի կուսակ-
ցութիւն կայ, որը բացառապէս հալածում է
թիւրքաց ոստիկանական գաղտնի գործակալնե-
րին և լրտեսներին: Այդ կուսակցութիւնը բա-
ւական բազմաթիւ և զօրեղ է, և մեծ երկու-
ն է ազդում թէ թիւրքաց իշխանութիւններին և թէ
կուսակցութիւնը չը սպանի մէկ կամ միւս լըր-
տեսին: Որինակ, այս օրերս, հնչակեանները Պէ-
րայում օր ցերեկով սպանեցին թէվօլէրով ոս-
տիկանութեան երեք գաղտնի գործակալներին,
և կարողացան փախչել զրանից առաջացած
խառնակութեան ժամանակ:

«Հայ-յեղափոխականների մի ուրիշ կուսակցու-
թիւն, որը նամակներ է ուղարկում զրառական
գումարներ պահանջելով գաղտնի կոմիտեի կա-
րիքների համար, նոյնպէս վերանորոգեց իր գոր-
ծունէութիւնը: Հայ-կաթօլիկների պատրիարք Ա-
զարեան այս օրերս արդէն երրորդ նամակ ստա-
ցաւ 400 թիւրքաց լրա (մոտ 3,500 բ.) պահան-
ջով: Երբ հնչակեաններն եկան փող ստանալու,
նրանց և չորերը փոխած թիւրքաց ժանդարմնե-
րի մէջ սկսվեց կռիւ, որի ժամանակ երկու
ժանդարմներ տեղի ու տեղը սպանվեցին:

«Ճատաւով արտաւարում թիւրքաց ոստիկա-
նութիւնը մի տուն գտաւ, ուր բազմաթիւ զի-
նամիտային ուսմբեր, պալիսոյ նիւթեր և աւա-
ղարաններ գտնվեցին: Այդ տան մէջ բնակվող
հինգ հայեր կալանաւորված են: Ասում են, որ
նրանց մասնակ է մի կին:

«Բոլոր վերոյիշեալ փաստերը պարզ ապացոյց
են այն բանի, որ գործերի դրութիւնը Բոսֆորի
ափերի վրա չառ էլ հանդիստ է: Բացի հայերի
յուստանած ձիգերից, զիգոհ թիւրքաց տարրերի
մէջ ևս գաղտնի յուզումն է նկատվում»:

«Новое Время» լրագրի մէջ կարգում ենք.
«Արտասահմանի լրագրիւնները շատ են խօսում
պետութիւնների և սուլթանի մէջ եղած յարա-
բերութիւնների մասին: Հաղորդում են, որ սու-
լթանի վրա ներգործող ազդեցութիւն պիտի
անեն Ռուսաստանը, Ֆրանսիան, Անգլիան և
Իտալիան, իսկ Աւստրո-Ունգարիան և Գերմա-
նիան երկրորդական տեղ պիտի զբաղեն: Սու-
լթանի արտաւարութեան մասին տեսակ-տեսակ
լուրեր են պոստում, բայց ընդհանուր համոզ-
մունք է, որ նա հարկադրված կը լինի զիջանել
պետութիւնների միացած և միաբան ճնշման»:

«Новое Обозрение» լրագրիւր Սալամաթից ըս-
տացել է տեղեկութիւններ, որոնք ցոյց են
տալիս, որ անցեալներում արտասահմանի լրա-
գրիւնների հաղորդածը Վանի նոր անկարգու-
թիւնների մասին չափազանցած է: «Այս թէ
ինչ է եղել իսկապէս: Անցեալ սեպտեմբերի
10-ին և 11-ին, ինչպէս յայտնի է հաւատար-
պէս, ընդհարումներ տեղի ունեցան «Գաշակ-
ցութիւն» կուսակցութեան պառլամենտ հայերի
և թիւրքաց զօրքերի մէջ: Գրա առիթն այն էր,
որ թիւրքաց կառավարութիւնը պահանջում էր
Վանի հայերից իրան յանձնել թաղնական «գա-
շաղ»-յեղափոխականներին: Հաքիր փաշայի ըս-
պառնալիքների ճնշման տակ, մի քանի հայեր
ցոյց տուին այն տները, ուր թաղնական էին
չգաշաղները, առաջարկելով հալածել նրանց,
եթէ նրանք արժանի են հալածանքի և հանգիստ
թողնել բոլորովին անոնղ քաղաքացիներին: Այդ
բաղէից թիւրքաց իշխանութիւնները սկսեցին
ուժակով ցոյց տալ չորս տները: Հրացանա-
ձգութիւն սկսվեց զօրքերի և ապստամբների
մէջ, որ շարունակվեց սեպտեմբերի 10-ի առա-
ւօտից մինչև 11-ի երեկուն: Հաստատում են, որ
մինչև 125 անգամ թնշանով են արձակել: Հա-
յերը կարգին մի մարդ, իսկ զօրքերը 10—15
մարդ: Իրկինաղէմին ապստամբները բարձրա-
ցան սալերը, ուր և հալածվեցան զօրքերից:
Երեք անգամ ընդհարում տեղի ունեցաւ և զը-
րանց ժամանակ զօրքերը երեսունից աւել մարդ
կորցրին, իսկ հայերը միայն երեք մարդ: Քիչ
ժամանակից յետոյ զօրքերը թողեցին ապս-
տամբներին հալածելը և վերադարձան իրանց
տեղերը»:

«Աթէնքի «Asty» լրագրիւր հաղորդում է լուր,
որ հայ միլիտանտը Ապիկ-էֆէնդի, որ նորեւ-
րումս դատաւարուվեց, երեք տարի բերդադրե-

լութեան, թռնաւորված է բանտում: Այս լու-
րը, սակայն, յարուցանում է կասկած:

Մարկիզ Դեօֆֆերին, քրիստոնեական նախկին
զեւպանը Պարիզում, արտասանեց Բէլժատում
մի ճառ, որի մէջ առաց, ի միջի այլոց, հետե-
ւեալը. «Եթէ Անգլիան այժմեան ժամանակ Եւ-
րօպայում առանձին ժողովրդականութիւն չէ
վայելում, դա պատճառը մտածել իր մարդասի-
րական ձգտումներն ու ցոյցներն են, որոնք ա-
ռաջացնում էին կասկած թէ Անգլիան կարող է
մի ընդհանուր ընդհարման պատճառ դառնալ:
Նոյնպէս Անգլիայի առանձնացած դիրքը և այն,
որ նա չէ ցանկանում մասնակցութիւն ունենալ
Եւրօպական դաշնակցութիւնների մէջ, անվստա-
հալթեան պատճառ դարձաւ: Սակայն չը պէտք
է չափազանցել այդ անվստահութեան նշանա-
կութիւնը: Ինչ վերաբերվում է արեւելեան հար-
ցին, անտեղի կը լինէր ասել թէ որ և է կռիւ
կամ ընդհարում տեղի կունենայ Անգլիայի և
Ռուսաստանի մէջ Թիւրքիայի պատճառով: Իս-
կապէս, մենք մշտական ընդհարում ունենք
միայն Թիւրքիայի հետ, կամ, աւելի ճիշդն ա-
ռած, ոչ թէ Թիւրքիայի կամ թիւրքերին հետ,
այլ այն արեւմտաւարաւ ընկերակցութեան հետ,
որ ձեռք է գցել երկրի վարչութիւնը և զրկել
Բ. Գուրու-Ֆրա իրաւունքներից: Մենք պիտի ի-
մանանք, որ հայերի վերութիւնը չէ կարելի
ձեռք բերել ոչ մի յատուկ աշխարհադրական
սահմանադրութեամբ, այլ միայն այնպիսի բե-
ֆօրմներով, որոնք, իրաւ որ, կարողութիւն կու-
նենան աղանդով կամպակցանութիւնից ոչ միայն
քրիստոնեաների, բայց և Թիւրքիայի մուսու-
լման հպատակների անձը և կայքը»:

Նիւ-Եօրկից «Times» լրագրին հետադրում են,
որ երկուշաբթի օր յօգուտ հայերի գումարված
մեծ միանգը մի որոշում կայացրեց, որի մէջ
յոյս է յայտնվում, որ հայ էմիգրանտների վրա
չը պէտք է նայել որպէս սովորական էմիգրանտ-
ների վրա և որ Վաշինգտոնի կառավարութիւնը
խաղաղ միջոցներ կը գործ դնի եւրօպական
պետութիւններին համաձայնեցնելու համար և կը
ստիպի Թիւրքիային վերջ դնել կոտորածներին:

Գլադստոն այդ միտնիցը կազմակերպողներին
մի հեռագիր ուղարկեց, որի մէջ իր գահնաւ-
կութիւնն է յայտնում գտնէ հայ ազգաբնակչու-
թեան մի մասի կորստից արդատվելու առիթով և
յայտարարում է, որ տեղի ունեցող սարսափնե-
րի անդադար կուտակումն առաջ կը բերի այն
«սարսափելի անարդարութեան» անկումն, որ
թիւրքաց կայսրութիւն է կաշկում:

Կ. Պօլսից հաղորդում են, որ զինարանում բոլոր
ծառայողները միահամուռ հրաժարվեցին գոր-
ծել՝ ոռոճիկներ ուղարկելու պատճառով:

Ընդունից հաղորդում են, որ հաստատ տեղե-
կութիւնների համեմատ, սուլթանը վաղուց ար-
դէն ամեն պատրաստութիւն տեսել է Կ. Պօլսից
փախչելու համար, եթէ հանգամանքներ ստի-
պեն: Ստորերկրեայ անցքը միացնում է պալա-
տը (Եւրօֆօսկ) նաւահանգստի հետ, ուր
միշտ պատրաստ կանգնած է սուլթանի չոգե-
նաւը:

«Börsen Courier» լրագրիւր հաղորդում է, որ
ի նկատի ունենալով Բ. Գրան ֆինանսական
ճնշված դրութիւնը, ուստաց ֆինանսների մի-
նիստրութիւնը համաձայնեցնել էին միմիայն պա-
կանեցնել այն պարտքից, որ 1892 թվի մայիսի
2-ի դաշնագրով Թիւրքիան պարտաւոր է վճարել
Ռուսաստանին ի հաշիւ պատերազմական տու-
գանքի:

Օրվայ հարցը այժմ Թիւրքիայում նոր հարկի
է «Temps» լրագրի թղթակիցը հաղորդում է
հետեւեալը. «Նոր հարկը, որ պէտք է վճարեն
մահմետական հպատակները, շատապարտել
անուն է կրում: Այդ հարկի նպատակն է միջոց-
ներ աւել պետութեանը կուտակել հայ յեղափո-
խականների դէմ: Այդ գումարներով կարելի կը
լինի մեծ քանակութեամբ հրացաններ գնել և
քանակութեամբ մահմետականների մէջ: Այդ բացառա-
կան հարկի գողարկարը, մի միջոց, որին զի-
ւում էին միայն այն ժամանակ, երբ թիւրքաց
կայսրութեան զօրութեանը վտանգ էր սպառ-
նում (օրինակ, վերջին ուսումնական պատե-
րազմի ժամանակ) պատկանում է միաժամանակ

սուլթանին և Բ. Գրանը: Գրա զլխաւոր պաշա-
պաններն էին իղէա-բէյ, սուլթանի զլխաւոր
օրիւլին, և ներքին գործերի մինիստր Մահմադ-
փաշա: Մի բանի օր առաջ նոր հարկի առիթով
Եւրօֆօսկ-Քիօսկում գումարված մինիստրների խոր-
հրդում այդ գողարկարին սատակ դէմ էին մեծ
վիզիրը և պետական խորհրդի նախագահը:
Միայն զօրեղ ճնշումից յետոյ նոր հարկն ըն-
դունվեց: Եւ, յիշաւ, ինչ որ պէտք է «ստիպու-
ղական փոխառութիւն» լինէր, «ստիպողական
հարկ» դարձաւ: Այնուհետ փոխվեց, բայց էութիւ-
նը նոյնը մնաց: Ինչպէս կարծում են, 12 մի-
լիոն թիւրքահպատակները պէտք է 25 միլիոն
ֆրանկ գումար տան: Ինչ վերաբերում է նոր
հարկ տունելու եղանակին, դրան գտնելը հնչա
բան չէ: Յայտնի է, թէ ինչ անկանոն կերպով
են վճարվում Թիւրքիայում զլխահարկերը: Նոր
հարկ հաւաքելու եղանակը գտնելու համար է,
որ կազմված է մի յատուկ յանձնաժողով հաս-
րակական աշխատանքների մինիստր Ֆէլաէֆէյին
փաշայի նախագահութեամբ: Յանձնաժողովը
պարտաւորեցրեց իմամներին՝ առաջարկել ուղ-
ղափառներին, որպէս զի պահանջած գումարնե-
րը մացնեն անոնց յոճափ յիշեցնելու նրանց
այդ մասին: Մի բանի իմամները հրաւերները
արդէն կայքած են Կ. Պօլսի մզկիթների պա-
տերի վրա: Նրանց մէջ ասված է, թէ հայերը և
քրիստոնեաները ապստամբվել են, նրանք կամե-
նում են քշել Թիւրքերին Եւրօպայից և որ իւ-
րաքանչիւր մահմետականի պարտն է դաժմա-
կան օգնութեամբ նպաստել ընդհանուր պաշա-
պանութեան գործին, չորպէս զի Թիւրքերը
հայերի հպատակներ չը դառնան: Այդ զինաւո-
րումը քաղաքական մեծ նշանակութիւն է ստա-
նում, մանաւանդ եթէ աչքի առաջ ունենանք
այն հանգամանքը, որ «Temps» լրագրի նոյն
թղթակցի խօսքով, թիւրքաց զօրքերի զինաւո-
րումը կատարելապէս ապահովված է զինարան-
ներում եղած զէնքերի պաշարներով: Մօզերի
սխտեմի հրացանները դեռ ևս չեն բաժանված,
որովհետև նրանց հանգին նշանակութիւնը վա-
րեցրեց Եւրօֆօսկի բանտարկեալին: Նաւա-
ստրմը զօրեղացնելու մասին էլ խօսք չէ կարող
լինել, որովհետև թիւրքաց նաւերը ամեն օր
մասնաւոր մարդկանց ձեռքն են անցնում: Մը-
նում է, այդպիսով, ենթադրել, որ նոր հարկի
նպատակն է զինաւորել մահմետական ազգա-
բնակչութիւնը: Այդ ենթադրութիւնը, ըստ երե-
ւոյթի, շատ լուրջ թւաց զեպականներին, եթէ
նրանք որոշեցին իրանց հարցապնդում առա-
կա չինել դրան: Գրա հետ միաժամանակ դեռ-
պանները բողոքեցին այն ազդարարի դէմ, որ
թիւրքերը սկսել են մզկիթներում: Որովհետև
նոր հարկի իրադրումը չափազանց դժուար է,
այդ պատճառով Կ. Պօլսում աշխատում են մի
տեսակ հանգանակութեան ձև տալ նրան, և ժո-
ղովրդի վրա միաժամանակ ներգործում են թէ
երկրագլուխ և թէ ֆանատիկոսութեան արթնացնելով
նրա մէջ»:

Աթէնքից «Times» լրագրին գրում են հոկ-
տեմբերի 18-ից (30-ին). «Հայ-փախտականների
թիւր Յունաստանում հասնում է 1000-ի: Նրան-
ցից 600 հոգի մի փոքր միջոցներ ունեն կամ
որ և է պարսպունքը գտել են, մնացածները
կատարեալ թշուառ վիճակի մէջ են և դուրս
դնելու տեղ անգամ չունեն, այնպէս որ ապ-
րում են վրաններում, որ տուն է նրանց կա-
ռավարութիւնը: Թիւրքիայից փախած այդ հայե-
րի զրութիւնը ողբալի է: Նրանցից չափաւր
մինչև անգամ անհրաժեշտ հագուստներ չունեն:
Աշխատանք և գործ գտնում են միայն նրանք,
որոնք յունարէն լեզուն գիտեն, իսկ լեզու գիտ-
ցողների թիւը աննշան է»:

Մարսէլի «Semaphore» լրագրի Կ. Պօլսի թղթ
թակիցը գրում է. «Արտաւարդ դատարանը չա-
րունակում է դատաւարութել Միջազգայնների
աններկի յանցանքը նրանց հայ լինելն է: Հա-
ղարից մի օրինակ: Մի հայ միջակ վաճառական
բանտարկված է սեպտեմբերի սկզբներից, և
սպասում է ներկայանալ դատարանի առջև: Նա
մեղադրվում է, որ օգոստոսի 26-ին, Օսմանեան
բանի մօտ, ուսմբեր է գցել թիւրք զինւորնե-
րի վրա: Չանաղան ազգութիւնների անողկա-
նող քսան վկաներ, որոնց մէջ կան պաշկապի-
ներ, ֆրանսիացիներ, իտալացիներ, աւստրիա-
ցիներ, յոյներ և թիւրքեր, միաբերան վկայում

էին, թէ այդ օրը, կէսօրից մինչև հինգ ժամը, նա չէ հեռացել մի ընկերութեան գրասենեակէն, ուր գտնուում էր բանկի վրա յարձակում գործելուց առաջ: Դատարանը, ի հարկէ, չը համոզվեց և յանցաւոր գտնելով նրան՝ դատաւարտեց:

«Новости» լրագրին գրում են Կ. Պոլսից, որ ուստաց զետեղելով պահանջներ և սուլթանի մոցնել, վերջապէս, խոստացված բէֆօրմները, և երբ սուլթանը պատասխանել է, թէ բէֆօրմներ մոցնելով քրիստոնեաների համար, պետութիւնը խիստ վտանգի կենթարկվի թիւրքերի կողմից, այդ ժամանակ ալ Նէլիզով պահանջել է որ ներդոցները բացվին օտար պետութիւնների պատերազմական նստերի համար, որպէս զի կարելի լինի պահպանել սուլթանի իշխանութիւնը: Թղթակիցը աւելացնում է. «Ես կարող եմ ձեզ հաւատացնել, որ ներդոցների հարցը չուտով կը վճռվի, այն էլ այնպէս, ինչպէս կամենում է Ռուսաստանը»: Դրանով կը ջնջվի Պարիզի դաշնագիրը և թիւրքերի անկախութիւնը կը դառնայ անուանական: Եւրօպան, ազատ մուտք ունենալով դէպի Բօսֆօր, ամեն ժամանակ կարող է հարկադրել սուլթանին կատարել իր կամքը:

Բայց արդեօք դա երազ է:

Ռուսաց «С.-Петербургскія Вѣдомости» և գերմանական «Internationale Correspondenz» լրագրերը նկարագրում են իրերի վիճակը Սիրիայում շատ անուր գոյնեղով: Բէյրութի չըջանում անբաւականութիւնը շատ մեծ ծաւալ է ստացել, նոյն իսկ թիւրք օֆիցերները բարձրաձայն յայտնում են իրանց համակրութիւնը «Եւրիտասարդ թիւրքերի» կուսակցութեան և ազատ կարգում են «Միշկլերէթ» լրագրերը: Զօրքը չէ ստանում ուսուցիչներ և զգեստ, շատերը մայրում են իրանց հին զգեստների պատառոտուն մնացորդները: Թիւրք ամբօխի և զօրքի մէջ յաճախ տեղի են ունենում անախարհ ընդհարումներ և նորերս ամբօխի կատարողութիւնը այնքան մեծացաւ, որ զինուորները ստիպված էին փախչել չուկայից և թաղանթի զօրանցներում: Թայիբ փաշան, որ չըջանի կառավարիչ է, ոչինչ չէ կարողանում անել կարգ վերականգնելու համար: Կ. Պոլսի կառավարութիւնը, իմանալով այդ բոլորը, հրաժարեցրեց թայիբին և նրա տեղ ուղարկեց Կրետէի նախկին կառավարիչ Աբդուլլահ փաշային: Վերջինս առաջին իսկ օրից կարգաց մեծ սպառնալիքներ և ցանկացաւ ձեռնարկել խիստ միջոցների, սակայն օֆիցերները և զինուորները յայտնեցին, որ նրանք չեն գործի մինչև չը ստանան իրանց թոշակները: Գնու ոչինչ փոփոխութիւն տեղի չէ ունեցել և յոյս չը կայ, որ Աբդուլլահ փաշան կարողանայ որ և է բան առաջացնել այդ թշուառացած երկրում: Նա մտադիր է նորից արշաւանք սկսել զբոսնելու դէմ, սակայն ոչ ոք չէ հաւատում աջողութեան:

«Berliner Tageblatt» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը մի տեսակցութիւն է ունեցել «պատրիզայագամ» Բարթոլոմէոսի հետ, որը ասել է նրան. «Վերջին խռովութիւնները հայերի գործը չէ, այլ զգուշի քրիզի գործողութիւնների արդեւնք են: Խմ ազգի անուանով ես բողոքում եմ այն բանի դէմ, թէ իբր այդ անկարգութիւնների մէջ մեղաւոր է իմ ազգը: Կառավարութիւնը կը պատմի յանցաւորներ, բայց ոչ թէ մեր անմեղ ժողովրդին: Պատմութիւնը վկայում է, որ թիւրքաց կառավարութիւնը պաշտպանել է (!) հայերին ոչ միայն իր սեփական տէրութեան մէջ, այլ և դուրսը: Կարող էք բողոքել նաւատացած լինել, որ նոր խռովութիւնների դէպքում, թիւրքաց կառավարութիւնը, քաջ տեղեակ լինելով իրերի իսկական վիճակին, նորից (?) կը պաշտպանի մեզ: Խմ հայեացքները երեսուն տարվայ փորձառութեան պտուղներ են: այդ փորձառութիւնը ես ձեռք եմ բերել իբրեւ մի մարդ, որ միշտ յարաբերութիւններ է ունեցել թիւրքաց բոլոր նահանգների վարչական շրջանների հետ:»

Այս խօսքերից յետոյ—նկատում է «Визар. Вѣд.» լրագիրը—կատարելապէս հակասալի են Բարթոլոմէոս տեղապահի յարձակումները իր նախորդ պատրիարք Խզմիրեանի վրա և նրա բողոքը մեծ պետութիւնների միջամտութեան դէմ: Ինչի համար է այդ միջամտութիւնը, եթէ Բարթոլոմէոսը առանց նրան էլ լաւ ասլում է իր պատրիարքարանում:

Ոչ մի տարակոյս չը կայ, որ հայոց հարցի լուծումը կարելի է Ռուսաստանի և Անգլիայի համաձայնութիւնից, որի մասին այնքան գրում են լրագրիները: Սակայն այդ համաձայնութիւնը զեռ վերջնականապէս կայացած չէ երևում, ինչպէս կարելի է եզրակացնել «Nord» լրագրի հետեւալ նկատողութիւնից. «Հակառակ անգլիական լրագրիների պնդումին, թէ իբր բոլոր մեծ պետութիւնների մէջ կատարեալ համաձայնութիւն է կայացել արեւելեան հարցի մասին, մենք անհրաժեշտ ենք համարում նկատել, թէ Անգլիայի գործողութեան եղանակը այդ հարցում չէ կարող գոհացուցիչ համարվել: Զմարիտ է, Անգլիան այլ ևս չէ չեղում միաբան գործողութեան եղանակից, ինչպէս առաջ, բայց նրա և միւս պետութիւնների մէջ զեռ գոյութիւն ունեն բաւական խիստ տարաձայնութիւններ այն գլխաւոր կէտերի և միջոցների մասին, որ անհրաժեշտ է ձեռք առնել թիւրքերի վերաբերմամբ:»

Անգլիական ազատամիտ կարգիւնի նախկին զինուորական մինիստր սըր Էմիլ Բանթրօպայ այս օրերս յայտնել է իր կարծիքը հայկական շարժման մասին, որը նա համարում է մի աղետի և բոլորովին մարգասէր շարժում: Նա խորհուրդ է տալիս, բացի զրանից, ձեռք բաշել Կիւրօսից, որովհետեւ այդ կողմի մի ժամանակ ընտրվել էր իբրեւ կենտրոն պատերազմական գործողութիւնների Ռուսաստանի դէմ: «Մենք պէտք է շատ ցուանք այդ առիթով կայացած համաձայնութեան մասին—աւելացրեց մինիստրը:—Ինչ վերաբերում է Եփեսոսին, Անգլիան այդտեղ մնում է քաղաքակրթութեան օգտի և ոչ թէ իր անձնական շահերի համար:»

«Daily Chronicle» լրագրի Հոսթի թղթակիցը հաղորդում է, որ մեծ պետութիւններից մէկը չուտով կառաջարկի դիպլոմատիական կոնֆերանսի ա գումարել արեւելեան հարցի մասին խորհրդակցելու և թիւրքերի դէֆօրմներ մոցնելու համար:

«Daily Graphic» լրագիրը հաղորդում է հետեւեալը. «Գնու Յարի արտասահմանեան ճանապարհորդութիւնից առաջ կազմված էր միջազգային կոնֆերանսի գումարելու ծրագիրը: Յանկանալով խուսափել կոնֆերանսի անաջող ելքից, ուստաց կառավարութիւնը որոշել է չընդունել ոչ մի վերջնական վճիռ մինչև այն ժամանակ, երբ այդ նոր քաղաքական ուղղութեան հետեւնցները չուսուցանալին պատերազմական և ֆինանսների մինիստրների կողմից: Այդ անհրաժեշտ է այն պատճառով, որ Ռուսաստանի վրա ամենից շատ կը բարդվի ծանրութիւն, ինչ և լինի կոնֆերանսի վճիռը: Բացի դրանից հաւատացնում են, թէ այն դէպքում, երբ կոնֆերանսին որ և է վերջնական վճիռ չը կայացնի, ուստաց կառավարութիւնը մտադիր է ինքն իրագործել մեծ պետութիւններին իր արած առաջարկութիւնները:»

Գերմանական «Lokal-Anzeiger» թերթի Կ. Պոլսի թղթակցին հաւատացրել են, որ Վիլհելմ կայսրը խոստացել է սուլթանին զինուորական օգնութիւն և իբր թէ թշնամի մօտեցած ժամանակ նա թիւրքերի արամադրութեան տակ կը զին 500.000 լաւ պարատուլած զինուոր:

ՀԱՆՕՏՈՒ ՀԱՌԸ

Պատգամաւորների ժողովում, ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Հանտո, պատասխանելով Գիւրբարին, ամենից առաջ կանգ է առնում իտալացի Սալվատորի սպանման վրա և ասում է, որ Բ. Գուրը այդ գործը յանձնեց զինուորական խորհրդին:

Անցնելով ապա Հոյաաստանում տեղի ունեցած անցքերին, Հանտո ասում է, որ ի նկատի ունենալով սուլթանի հպատակութեան տակ գաղութի երեք միլիոն հայերի բազմաթիւ և ցրված լինելը, շարժումը այդպիսի մեծ չափեր չէր ընդունի, եթէ որ Եւրօպայի հետ չիլումն չը զարթոնէր նրանց մէջ ինքնուրոյնութեան ցանկութիւնը և եթէ որ մանաւանդ թիւրքերի վատթար վարչութիւնը դժգոհութեան յաճախակի և կատարելապէս օրինական առիթներ չը տար:

Եւրոպական լրագրական տեսութիւնը, Հանտո ասում է, որ յուզմունքը մանաւանդ զօրեղ

էր Անգլիայում, ուր կոմիտէները աշխատում էին զարգացնել միջամտութեան ոգին, որը շատ անգամ զրդել է Եւրօպային ուժով ստիպել Արեւելքին կատարել իր կամքը: Յուզմունքը սաստկանալով 1893—1894 թւերին, ստիպեց Կ. Պոլսի զեսպաններին զբաղվել զբանով և անգլիական կառավարութիւնը հասկացաւ, թէ ինչ վտանգների կարելի է ենթարկվել ցանկանալով միայնակ գործել: Սուլթանի խնդրելով, համաձայնութիւն կայացաւ անգլիական, ուստաց և ֆրանսիական զեսպանատներին մէջ: Ֆրանսիան, որը ուղղակի շահեր չունի այդ հարցում, ստաջարկեց իր ծառայութիւնները խաղաղագիտական համար, և 1895 թ. հոկտեմբերին համաձայնութիւն կայացաւ այն բէֆօրմների վերաբերմամբ, որոնք պէտք է մոցնվէին Հոյաստանում: Այդ ծրագիրը զեռ ևս իրագործված չէր, երբ սկսվեցին կռիւներ և կոտորածներ:

Պատգամաւորների ժողովին հասկացողութիւն տալու համար կոտորածների լրջութեան և պատճառների մասին, Հանտո կարգում է քաղաքական գործակալներից մէկի տիտր հարրադարութիւնից և յիշեցնելով Օսմանեան բանկի վրա եղած յարձակումը, աւելացնում է, որ պետութիւնները անտարբեր չը վերաբերվեցին զրան և որ Ֆրանսիան այնպիսի լեզուով խօսեց, որ անհար էր չը հասկանալ: Զարիքը տարածվեց Օսմանեան կայսրութեան միւս մասերի վրա ևս: Մակեդոնիայում, ուր վտանգի առաջն առնվեց չորհրդի Աւստրո-Ունգարիայի նախաձեռնութեան, և Կրետէում, ուր զիւլումատիան ձեռնարկեց մի նոր, ազատամիտ բեմիս:

Մինիստրները—չարունակում է Հանտո—չարիքի արժանք չը գտան, բայց, գոնէ, պարզեցին մի քանի սկզբունքներ, որոնք ընդունակ էին ղեկավարել պետութիւններին այդ փափուկ և վտանգաւոր հարցերի լուծման մէջ: Այդ սկզբունքները, չը հայեցել շահերի գաղաւթի մրցութեան, որ յաճախ երևան էր գալիս անխուհեմ կրքերի չորհրդի, ամենից առաջ, ըստ երեւոյթին, ազդեցին պետութիւններին միաբանութեան վրա: Այդ վերջինները, անխաղաղ, համառոտ են, որ ամենից անհրաժեշտ է ամուր և օրինական համաձայնութիւն: Կառավարութիւնները միացնում են իրանց ջանքերը. որպէս զի գտնեն այդ համաձայնութեան հիմքը և հաստատուն նրան, և աշխատում են այժմ վերացնել կամ հարկել տարաձայնութիւնների բոլոր պատճառները: Գնապանութիւնների ընդհանուր գործունեութիւնը Կ. Պոլսում ճշմամբին հէց սկզբից յաջորդական և միաբան էր, և այդ յաջորդականութիւնը պէտք է վերաբերել ոչ թէ նրանցից որ և է մէկին, այլ բոլորին միասին: Հէց այդ միաբանութիւնը, խրախուսված մինիստրութիւնների հաւանութիւնից, կարողացաւ այս բօն պէս իմ յիշած հետեւանցները պահպանել: Կրետէում և Մակեդոնիայում: Այդ առաջին փաստերից պարզ երևում է, թէ պէտք է զլինի հանել միայնակ գործելու որ և է միտքը, և բոլորը տեսան այն եւանդը, որով Անգլիայի ազատամիտ կուսակցութեան զեռ նորերս եղած պարաբոլը գերադասեց հրաժարվել իր կոչումից, որպէս զի չը հակասէ այժմեան պահպանողական միմինիստրութեան պարագլխի յայտարարութիւններին:

Սակայն, պետութիւնների ներքործութիւնը Կ. Պոլսի վրա՝ սուլթանից նրա պետութեան համար հասարակական և մասնաւոր կեանքի բարեւոյններ կորցնելու նպատակով, չը պէտք է չօչափի Օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը և դաշնագիրները: Այդ տեսակէտին էր հետեւում միշտ Ֆրանսիան: Դա նրա քաղաքականութեան և պատմութեան ամենապատկառելի ասանդութիւններից մէկն է, և նա երջանիկ է, որ զբան միանում են և ուրիշ պետութիւնները, որպէս եւրօպական հաւասարակուցութեան ամենահաստատուն հիմքին: Հանտո կարծում է, որ պետութիւնների գործողութիւնների միաբանութիւնը կարող է զգացնել տալ Կ. Պոլսում հէց այն մտքով, որ մասնացոյց արին նախընթաց հետեւորները:

Մինիստրը չարունակում է.

«Ոչ անմիջական ներգործութիւնը, ոչ condominium-ին նման որ և է բան այստեղ տեղ չունի. դա վերին ատածանի վաղաժամ և վտանգաւոր կը լինէր: Բայց եւրօպական դիպլոմատիան, որոշելով կապել վերջերը և արգելել զնեւ նոսրերս տեղի ունեցած թշուառութիւնների կրկն-

նութեանը, կարող է Օսմանեան կառավարութեան հետ միասին ձեռք դարկել կայսրութեան բարեւոյնի խնդրին: Այդ խնդրը դժուար է, բայց վեր չէ մեր ոյծերից և ցանկութիւններից: Պարսք եմ համարում արձանագրել այստեղ Ռուսաց կայսրի Պարիզի այցելելու բարեբար հետեւնցները: Մենք կարող ենք յոյս դնել այդ այցելութեան վրա, որպէս մի անցքի վրա, որ արդարացի կերպով գրաւում է դէպի ինքն պատգամաւորների ժողովի ուղադրութիւնը: Տեղի ունեցաւ հարեացների փոխանակութիւն և երևան եկաւ երկու պետութիւնների կարծիքներ և շահերի համամասնութիւն, և մենք հաւատում ենք, որ շահերի չափաւորութեան և համեմատութեան չորհուրէ կարելի կը լինի այնպիսի ուրոշումներ կայացնել, որոնք կը համապատասխանեն բոլոր մնացած կարիքների տեսակէտների և զբոսնեան պահանջներին Արեւելքում: (Հաւանութեան աղմկելի նշաններ): Միացած Եւրօպան կը կարողանայ, կարծում ենք, հասկանել տալ սուլթանին, ստիպել նրան զգուշանալ ինքնակալ ազդեցութիւններից, կը կարողանայ ապացուցանել նրան, որ չարիքը այն չէ, որ պետութեան մէջ այս կամ այն կուսակցութեան կամ կրօնին առաւելութիւն է տրվում ի միտս մնացածների, այլ այն է, որ բոլոր կաթօլիկները, հայերը, ուղաւորները և մանկեականները անհիմուն են նոյնատեսակ չարիքներից և բարեւոյններին են պահանջում Եւրօպան կապացուցանի նրան, որ չարիքի արմատը ֆինանսական և վարչական քաղաքականութեան վատ ընթացքի մէջն է և միջոցներ ցոյց կը տայ նրան հաստատել ամեն տեղ մի յայտնի կարգ, առանց որի պետութիւնները գոյութիւն ունենալ չեն կարող: Եւրօպան կը պահանջի սուլթանից՝ նրա սեփական խոստումների իրագործումը, կառաջարկի նրան բէֆօրմներ մոցնել, որոնց համար նա արդէն տուել է իր համաձայնութիւնը, ընդարձակել նրանց ծաւալը և վերջ զնեւ հաւանքները, բայց անել անտարբեր և օգնել ամենից շատ կարօտութիւն ունեցողներին: Սուլթանին հեղինակաւոր կերպով կը յիշեցնեն, որ նրան է հաւատացած Եւրօպական կոլոնիաների կեանքը, որ նա պատասխանատու է նրանց համար և պէտք է երաշխաւորի ոչ միայն իր հպատակների, այլ և թիւրքաց հողի վրա բոլոր ապրողներին ապահովելով, հասարակական խաղաղութիւնը և կարգը: Վերջապէս նրան կը կարողանան ապացուցանել, որ դա է միակ և զօրեղ քաղաքականութիւնը և որ նրա մէջ, միմիայն նրա մէջն է պարունակվում պատիւը և երջանկութիւնը իր համար և իր հպատակների համար: (Հաւանութեան բարձրաձայն նշաններ): Բայց անհրաժեշտ է նոյնպէս, որ նրանք, որոնց վրա դրված է մերթ նոյն իսկ խիստ համարձակ ձեռնարկութիւնների պատասխանատուութիւնը, հասկանան չարիքը, որ կարող են պատճառել նոր անգղալուծութիւններով: Նրանք գիտեն, որ Եւրօպան անտարբեր չէ նայում նրանց հարուածող դժբաղդութիւնների վրա, բայց հարկաւոր է, որպէս զի նրանք հակառակին նոյնպէս, թէ այն գործը, որ պէտք է ձեռնարկել, դժուար է, թէ նա կարող է ձեռնարկել, թէ ոյծով այդտեղ չեն օգնի, և թէ պէտք ամբողջ Եւրօպան, ոգևորված բարեհաճ զգացմունքներով, ուղղում է իր հայեացքները նրանց վրա և բարիք է ցանկանում նրանց, բայց նա նոր սիւնիքիներ չէ ցանկանում, որոնք չեղում են նրան իր խնդրից և խլում են նրանից օգնելու միաբան ցանկութիւնը:»

Վերջապանութեան մէջ Հանտո ասեց. «Ես աշխատեցի պատասխանել ինձ համար հարաւոր սահմաններում ինձ ուղղած հարցապնդումներին և երևան եկած երկնայնքներին, աշխատեցի պարզել ձեր առաջ այն նոր փաստերը, որոնք անցքերի ընթացքի չորհուրէ աւելացել են յաւիտեանական արեւելեան հարցի վրա: Կարծում եմ, որ պատգամաւորների ժողովը ևս կը հասկանայ, և նրանից զօրեւել կը հակառակ, թէ որպիսի զրդումներ են կառավարում մեր երկիրը: Ֆրանսիան, հաւատարիմ իր բոլոր աւանդութիւններին, ցանկանում է արեւելեան ժողովուրդների վիճակի բարեւոյնը և չէ մոռանում իր կրօնական հովանաւորութեան պարտաւորութիւնը: Նա գիտէ, որ կարգը և ապահովութիւնը անհրաժեշտ են այդ բոլոր մեծ շահերի համար, որ նա պաշտպանում է, չէ մոռանում և այն կապերը, որ վաղուց չաղկաւորում են նրան Օսմանեան

